ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ ք.Արմավիր ,Հանրապետության փ. 32, Հեռ. (0237) 2-36-54,
էլ. փոստ՝ armavirmunicipality@gmail.com

13 փետրվարի 2024թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

«Մաքս Վին» ՍՊԸ-ի

Տնօրեն՝ Արտակ Հովհաննիսյանին

Հարգելի Արտակ Հովհաննիսյան,

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «Մաքս Վին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ.-ի նոյեմբերի 09-ին կնքել է համաձայնագիր, որով ուժի մեջ է մտել 2023թ.-ի սեպտեմբերի 13-ին կնքված **ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/8-1** ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները: Վաճառողին տրվել է 20 օրացուցային օր ժամանակ ապրանքները մատակարարելու համար, սահմանված ժամկետում Վաճառողի կողմից **ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/8-1** ծածկագրով գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված ապրանքները մատակարարվել են, բացառությամբ 17-րդ չափաբաժնի՝ **Հյութաքամիչի**:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները մասամբ չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2024թ.-ի փետրվարի 13-ից Պայմանագիրն 17-րդ չափաբաժնի մասով ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն

ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 3 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 5250 (հինգ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամի և 3500 (երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ Ֆինանսների նախարարություն 900335201092)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «Մաքս Վին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հարգանքով՝

Արմավիր համայնքի ղեկավար՝ **Վ. Սարգսյան**